

Սարգիս Արքեպ. երբ 1772ին Պոլսէն  
 Հոռոմ մեկնեցաւ, Յարութիւն Արքեպ. ալ կ'ու-  
 ղէր անոր հետեւիլ, ինչպէս Յարութիւն Պետա-  
 նեանի ընդարձակ նամակին մէջ յիշուեցաւ,  
 ինչպէս նաեւ 13 Փետր. 1773ին Ստեփ. Վ.  
 Աբրահայրն Մխիթարեանց Վենետիկէն կը գրէր  
 առ Սարգիս Արքեպ. ի Լիվոռնոյ (Գիւ. Լիվ.):  
 «... Գրեմ, թէ եւ Բասենցի Յարութիւն վար-  
 դապետն ունի միտս փախչելոյ, զոր զգացեալ են  
 բազումք եւ շիտթութիւն մեծ հանեալ: Զնոյն  
 գրեմ եւ վասն առաջնորդին Գաղատիոյ...:»  
 Սակայն Սամուէլ Եպ. Երզնկացոյ եւ Գր. Պաս-  
 մաճեան Պատրիարքի մեկնումէն շատ ետքն հա-  
 զու կրցած է յաջողցնել, այն է 1781ին.  
 (սխալ է Ա. Պէրպէրեան, Պատմ. Հայոց, Կ. Պոլ.  
 1871 էջ 435 գրուած թուականն փախստեան՝  
 «14 Օգ. 1771»:) Կ'երեւայ թէ Վենետիկ,  
 ինչպէս նաեւ Հոռոմ երթալէն ետեւ՝ 1781  
 Օգ.ին մէջ Վենետիկէն մեկնած եւ Թրիեստ  
 հասած է, ինչպէս յայտնի կ'երեւայ Ստեփ. Վ.  
 Աբրայի Մխիթարեանց ի Վենետիկ առ նոյն Յա-  
 րութիւն Արքեպ. գրած 22 Օգ. 1781 թուա-  
 կիր նամակէն (Գիւ. Անտ.), ուր կ'ըսուի. «...  
 իմացայ զաջողութեամբ հասանիլ ձեր ի մէջ  
 երկուց աւուրց ի Թրէստ...:»

Թրիեստի մէջ ապրած է տեղւոյն Մխիթա-  
 րեանց հետ սերտ բարեկամութեամբ, նոյն Միա-  
 բանութեան նորընծայ քահանաները ձեռնա-  
 դրելով: Հետաքրքրութեամբ հետեւած է  
 արեւելքի մէջ անցած ազգային դէպքերու,